ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Յունիսի 13—14-ին Հանովերում տեղի ունեցած Աւետարանական—ընկերվարական համաժողովն՝ պարզ արտայայտած քաղաքական տենդէնցիայով իւր վրայ դարձրեց պահպանողականների ուշադրութիւնը։ Մշակելով ընկերվարական խնդիրներ աւետարանական դաղափարների տեսակէտից, ինչպէս որ հանդիսանում են դերմանական բողոքականների յառաջադէմ մասերը և իրեն դլխաւոր նպատակն ընտրելով ընկերվարական տրամադրութեան զարդացումը, համաժողովն, ի դէմս իւր մի քանի անդամների, շատ որոշ կերպով կողմնակից հանդիսացաւ ժամանակակից ընկերվարականութեան աշխատանքի իրական եղանակի։ Այդ համաժողովն իւր վրայ դարձրեց պահպանողականների ուշադրութիւնը մանաւանդ այն պատճառով, որ մարդիկ աւետարանական դաւանութեան դրօշակի տակ դործող անձինքներից և հիմնարկութիւններից ընկերվարական ասպարիզում հանդէս դալն ու պաշտպան հանդիսանալը չէին լսել։ Տէրերի ու բանւորների փոխադարձ յարաբերութեան մասին փոխանակ ընդհանուր դատողութիւնների, փոխանակ մի կողմ սիրոյ և հոդատարութեան ոդու, իսկ միւս կողմն էլ իրենց վիճակով դոհ մնալու և խոնարհ լինելու պահանջի, որ այնքան ընդհանուր է ուղղափառ պատօրների քարոզներում, համաժողովը պարզի պարզոյ անցաւ իրական ընկերվարական քաղաքականութեան կողմը։ Քարտուղար Շնէմէլինդերի կարդացած հաշիւը խրախուսում է աւետարանական բանւորների խմբակցութիւնները, որոնք դադարել են նախաձեռնողների հետ «բարի տրամադրութեամբ համաձայնութեան դալուն հաւատալուց» և հասել են դասակարդային կազմակերպութեան գիտակցութեան։ Ուսուցչապետ Զիվիկինդը ապացուցանում էր պրոցէսիօնալ բանւորների միութեանց նշանաւոր լինելը և բնական էր դանում նրանց ձգտումը դէպի ռամկավար—ընկերվարական կազմակերպութիւն։ Բանւորը չի կարող քաղաքականութիւնից հրաժարուիլ, ասում էր նա. դասակարդային կազմակերպութեամբ նա մասամբ միայն հասնում է իւր նպատակին և այդ պատճառով արհեստակցական օժանդակութիւնը պէտք է լրացուի պետական օժանդակութեամբ։ Մի այլ ճառախօս բացատրում էր արհեստակցական (համքեարական) կազմակերպութեան բարձր բարոյական նշանակութիւնը նրա համերաշխութեան և փոխադարձ պահպանութեան սկզբունքներով։ Աւետարանական տեսակէտից

արդարացի դանելով բանուորական դասակարգերի կողմից իրենց շահերի պաշտպանութիւնը, համաժողովի անդամները միւս կողմից յանուն ընկերվարական սկզբունքների իրենց պահանջներն էին յայտնում և դէպի եկեղեցին։ Ուսուցչապետ Բաումգարտէնը մատնանիշ եղաւ եկեղեցական հիմնարկութեանց մի ամբողջ շարքի վրայ, որոնք գործում են հակաընկերվարական կերպով, այսինքն վիրաւորում են աւետարանական ժողովրդի փոխադարձ կապակցութեան զգացմունքը։

Այս շարքումն էր դասում նա այն բոլոր հիմնարկութիւնները, որոնք արգելում են չքաւոր մարդկանց լիակատար մասնակցութիւնը եկեղեցական գործերում և խարութիւն են դնում հարուստների և չքաւորների մէջ, եկեղեցիներում աթոռներ վարձու տալը, չքաւորների խմբական միրտութիւններն ու պատկառութիւնները, որովհետև նրանք միջոցներ չունին կանոնաւոր վարձատրելու և այդ խորհուրդները տան մէջ կատարել տալու, մի քանի օրէնքների վարձատրութիւնը, բանուորներին անյարմար ժամանակ ժամակարգութիւն կատարելը, ծխերի ոչ թէ տեղապրական(թաղերով)բաժանումն, այլ ըստ սոցիալական դրութեան, օժանդակութիւն ստացող անձերին եկեղեցական գործերում ձայնի իրաւունքից զրկելը և այլն և այլն։

Պրոֆեսիոնալ բանուորների Կեօլնի համաժողովում, որը կայացաւ անցեալ մայիսին, պարզուեց, որ այդ կազմակերպութիւնները զարգանում են մեծ յաջողութեամբ, որոնք կարողացել են միացնել 1¼ միլիոն բանուորներին, այսինքն ամբողջ բանուորական դասակարգի մի քառորդ մասը։ որը մեծ գումարներ ունի իւր տրամադրութեան տակ։ պարզուեց նոյնպէս և նրանց սերտ կապը քաղաքական կազմակերպութեան հետ։ Բայց այդ լաւատեսութիւնը համաժողովի կողմից դէպի ընկերվարական—ռամկավարները բաւական եղաւ Norddeutsche Allg. Zeitung-ին, յարձակուելու համաժողովի վրայ։ մեղադրելով, որ նա չը մնաց կրօնական—բարոյական շրջանակում և խառնուեց քաղաքականութեան՝ կուսակցական դիրք բռնելով։